ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի՝ 2018 թվականին կատարած աշխատանքների և 2019 թվականի ընթացքում նախատեսվող աշխատանքների վերաբերյալ

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժինն ի պաշտոնե զբաղվել է զբոսաշրջության հարցերով **2018 թվականի հունվարից**, ուստի, ելնելով վերոնշյալից, տրամադրում ենք այդ ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկատվությունը՝ սկսած 2018 թվականից:

Վերջին 10 տարիների ընթացքում Հայաստանի զբոսաշրջության ոլորտում գրանցվել է զարգացման աննախադեպ տեմպ, որն իր ազդեցությունն է ունեցել նաև Վայոց ձորի մարզում զբոսաշրջության ակտիվացման վրա:

Ինչպես գիտենք, զբոսաշրջության բնագավառի պետական քաղաքականության իրականացման նպատակով անհրաժեշտ է ապահովել զբոսաշրջության կայուն զարգացում: Իսկ կայուն զարգացումը պահանջում է բոլոր շահագրգիռ կողմերի՝ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի և բնակչության ակտիվ և արդյունավետ համագործակցություն, որի արդյունքում կարձանագրվի զբոսաշրջիկների թվի աճ:

Ստորև ներկայացնում ենք **բաժնի** կողմից կատարված աշխատանքները նկարագիրը:

Տուրիզմի տարածաշրջանային կենտրոնի հետ մշակվել է հյուրատների զարգացման ծրագիր, որի մրցույթը հայտարարվել է և 25 հյուրատների ներդրումային ծրագրերի հիմնական մասի ֆինանսավորումը կավարտվի նոյեմբեր ամսին:

Մարզում զբոսաշրջության առավել զարգացման և աշխուժացման նպատակով մշակվել են ներդրումային ծրագրեր և ներկայացվել ՀՀ կառավարություն, ինչպիսիք են՝ Նորավանքի կիրճի, Արենի գյուղի և Մոզրովի քարանձավի ներդրումային ծրագրերը:

Այժմ զբոսաշրջության պետական կոմիտեի հետ համատեղ մշակվում են Վայոց ձորի տուրիստական այլընտրանքային եղանակների զարգացման ուղղությունները, հեռանկարները և իրականացման ռազմավարությունը:

<<20 անիրանականանալի իրականություն>> ծրագրում ներառված է Վայոց ձորից պատմամշակության և տեսարժան վայրերի 6 օբյեկտ՝ Սելիմի քարավանատուն, Սմբատաբերդ, Սպիտակավորի եկեղեցին, Մարտիրոսի Վիմափոր եկեղեցին, Ագարակաձորի կամուրջը, Պասկևիչի կամուրջ:

Տվյալ ծրագրի շրջանակներում բաժնի և Զբոսաշրջության պետական կոմիտեի հետ համատեղ մշակվել են ենթակառուցվածքների ստեղծման, տուրիստական փաթեթների պատրաստման նախագծերը:

Թուֆենկյան հիմնադրամի կողմից Արենի գյուղում հյուրանոցային համալիրի կառուցման գործում բաժինն աջակցել է պետության կողմից անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծմանը:

2018 թվականի փետրվար ամսին բաժինը կազմել է զբոսաշրջության զարգացման 9 գործարար ծրագիր և ներկայացրել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, որոցից 2-ն արդեն ֆինանսավորվել է 2019 թվականին:

Տարեկան կտրվածքով մարզ է այցելում մոտավորապես 120000 զբոսաշրջիկ, որոնցից գիշերակացով մնում են մոտ 15000-ը: Խնդիր է առաջացել՝ զարգացնել զբոսաշրջային փաթեթները և ենթակառուցվածքները, որպեսզի զբոսաշրջիկներին գոնե մեկ օր պահեն մարզում: Աշխատանքներ են տարվում՝ Երևան–Մեղրի ճանապարհից հեռու գտնվող զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող պատմամշակութային հուշարձանների ենթակառուցվածքները զարգացնել, ինչպես նաև ապահովել նրանց մասին համարժեք տեղեկատվության տարածմանը:

Մարզում զբոսաշրջության խթանման նպատակով առաջարկում ենք.

1. Ստեղծել Տուրիստական ինֆորմացիոն մարզային կենտրոն, որը կապահովի մարզի տուրիստական պոտենցիալի գույքագրումը, համագործակցությունը տեղական գործընկերների միջև, կստեղծվի հուշանվերների խանութ տեղական արտադրողների համար, կմշակվեն նոր զբոսաշրջային փաթեթներ, մարզը կներկայացվի արտերկրներում, ինչպես նաև՝ ՀՀ-ում՝ ներգնա տուրիզմի զարգացման նպատակով:
2. օգտագործել մարզի մոտ 1400 պատմամշակութային և ճարտարապետական հուշարձանները, բնական տեսարժան վայրերի առկայությունը, բուսական և

կենդանական աշխարհի բազմազանությունը, էկոլոգիապես մաքուր մթերքների արտադրությունը, Ջերմուկ քաղաքի առողջարանների և հանգստյան գոտու ճանաչվածությունը և ձմեռային զբոսաշրջության համար նրա կարողությունները մարզը դարձնել զբոսաշրջության համար գրավիչ և նպաստավոր տարվա 4 եղանակների համար:

3. Մարզում զարգացնել զբոսաշրջության հետևյալ ուղղությունները՝ էկոտուրիզմ, բնական տուրիզմ, արկածային տուրիզմ, գիտական տուրիզմ, անձավագիտական տուրեր, լեռնային և հետիոտն երթեր, ձիավարություն լեռնային տարածքներով, կանիոնինգ / ժայռամագլցում/, ձկնորսություն, պատմամշակութային տուրիզմ:

Բաժնի մշտական ուշադրության կենտրոնում է գտնվում բազմակողմանի **համագործակցային հարաբերությունների զարգացումն ու խորացումը** հետևյալ պետությունների հետ՝ Իրանի Իսլամական Հանրապետություն (Ուրմիա նահանգ), ՌԴ(Նիժնի-Նովգորոդի Արխանգելսկի մարզ), Բելոռուսիայի Հանրապետություն (Մինսկի մարզ):

Համաձայնագիր է կնքվել ՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ և Չեխիայի Հանրապետության Կարլովի Վարի քաղաքների միջև, ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք քաղաքի և ՌԴ Բակաու նահանգի Թրգու Օկնա քաղաքի միջև, ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքի և Ֆրանսիայի Հանրապետության Պրովան-Ալպ-Կոդ դ՝ Ազյուր շրջանի Վար դեպարտամենտի Բանդոլ քաղաքի միջև:

Յուրաքանչյուր հանդիպման ժամանակ քննարկվել է զբոսաշրջության ոլորտում համագործակցության հարցը, որի արդյունքում համաձայնություն է ձեռք բերվել ՌԴ Արխանգելսկի մարզի հետ՝ տուրիստական կենտրոններ հիմնել ՀՀ Վայոց ձորի և ՌԴ Արխանգելսկի մարզերում, որն էլ մարզում կխթանի զբոսաշրջությունը:

ՌԴ Արխանգելսկի և ՀՀ Վայոց ձորի մարզերի միջև կնքված <Համագործակցության համաձայնագրի> շրջանակներում ՀՀ Վայոց ձորի մարզպետ Տրդատ Սարգսյանը 2019 թվականի մարտի 18-ից 20-ը աշխատանքային այց է կատարել ՌԴ Արխանգելսկի մարզ: Մարտի 20-ին Վայոց ձորի մարզպետ Տրդատ Սարգսյանի, Արխանգելսկի նահանգապետ Իգոր Օռլովի, Արխանգելսկի

քաղաքային մարմնի ղեկավար Իգոր Գոձիշի, շրջանի ու քաղաքի պատգամավորական կորպուսի ներկայացուցիչների մասնակցությամբ Արխանգելսկում տեղի է ունեցել <Հայաստանի տան> հանդիսավոր բացումը:

Արխանգելսկի և Վայոց ձորի մարզերի համագործակցության փորձը հետաքրքրել է նաև Կալինինգրադի մարզի ներկայացուցիչներին: Հանդիպմանը ներկա Կալինինգրադի մարզի ազգային-մշակութային տարածքային միության գործադիր տնօրեն Կարեն Սուջյանը նշել է, որ Պոմորեի և Կալինինգրադի ջանքերի միավորման շնորհիվ Հայաստանի հետ համագործակցությունը կարող է նոր մակարդակի հասնել: Իգոր Օռլովը և Տրդատ Սարգսյանը քննարկել են զբոսաշրջության զարգացման հարցեր, ինչպես նաև Պոմորեի և Հայաստանի գեղարվեստական խմբերի մասնակցությամբ մշակութային փոխայցերի կազմակերպմանը վերաբերող հարցեր:

Փոխադարձ այցելության շրջանակում հոկտեմբերին Հայաստանի Հանրապետություն է ժամանել Արխանգելսկի մարզի պատվիրակությունը, Իգոր Օռլովի գլխավորությամբ: Այցի ընթացքում՝ 2019 թվականի հոկտեմբերի 6-ին, . կայացել է ՌԴ Արխանգելսկի և ՀՀ Վայոց ձորի մարզերի համատեղ բիզնես ֆորումը: Ֆորումի ընթացքում քննարկվել են երկու մարզերի միջև ակտիվ փոխշահավետ համագործակցությունը մի քանի ոլորտներով, մասնավորապես՝ առողջապահություն, բիզնես, տուրիզմ ու կրթություն: Ֆորումի ավարտից հետո Արխանգելսկի նահանգապետ Իգոր Առլովը և նրա գլխավորած պատվիրակությունը Վայոց ձորի մարզպետ Տրդատ Սարգսյանի և մարզպետարանի աշխատակիցների հետ մասնակցել են Մալիշկա համայնքի Լոմոնոսովի անվան միջնակարգ դպրոցում հյուրերի պատվին նվիրված համերգին:

Արխանգելսկի մարզպետ Իգոր Օռլովի դպրոցին նվիրել է սպորտային պարագաներ, գրքեր և Արխանգելսկի դպրոցականների ձեռքով պատրաստված հուշանվերներ:

Հոկտեմբերի 7-ին Երևանում տեղի ունեցավ <Արխանգելսկի տան> հանդիսավոր բացումը: Մինչ բիզնես ֆորումը հոկտեմբերի 5-ին Իգոր Օռլովը մասնակցել է Արենիում կայացած Արենի գինու փառատոնին: Հայաստանյան այցի մշակութային կապերի շրջանակում Արխանգելսկի

<Հյուսիսային երգչախումբ> համույթը գեղեցիկ կատարումներով հանդես է եկել Եղեգնաձորի մշակույթի կենտրոնում, ֆորումի մասնակիցների առջև և Արենի գինու փառատոնի համերգային ծրագրում:

Նշենք, որ 2018 թվականի հոկտեմբերի 7-12-ը Ֆրանկոֆոնիայի 17-րդ գագաթնաժողովի շրջանակներում Երևանի <<Ազատության>> հրապարակում բացված <<Հայաստան>> տաղավարի կազմակերպչական աշխատանքներն իրականացրել է Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժինը: Նշենք. որ մեր մարզի տաղավարները պատշաճ ներկայացնում էին Վայոց ձորի մշակույթը՝ այդպիսով նաև մարզում խթանելով զբոսաշրջության զարգացմանը:

Բաժինն ակտիվ մասնակցություն է ունեցել Քաղաքացու օրվա միջոցառումների նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքներին:

2019 թվականին զբոսաշրջության զարգացմանն ուղղված ծրագրերի շրջանակում կատարվելիք գործողությունները

1. 2018 թվականին սկսվել են թվով 25 հյուրանոցների վերանորոգման աշխատանքներ, որոնք այժմ ընթացքի մեջ են և նախատեսվում է ավարտին հասցնել 2019 թվականին:
2. Եվրամիության միջոցներով կառուցվել է արևային էլեկտրակայան: Ստացված շահույթը կօգտագործվի մարզում զբոսաշրջության զարգացման նպատակով:
3. Մարզպետարանի կողմից մշակվել են Մոզրովի քարանձավի շահագործման, Եղեգիսի կիրճի զարգացման ներդրումային ծրագրերը, որոնք դեռևս ներդրողներ չունեն:
4. Նախատեսվում է մշակել այնպիսի ծրագրեր, որոնց միջոցով կխթանվի Վայոց ձորի զբոսաշրջությունը տարվա բոլոր եղանակներին:
5. 2019 թվականին նախատեսվում է կազմակերպել մեծ ֆորում–կլոր սեղան, որին հրավիրվելու են մարզի հյուրանոցների, հյուրատների, զբոսաշրջային տների ներկայացուցիչները: Նախատեսվում է աշխատանք կատարել ՝ բարելավվելու մատուցվող ծառայությունների որակը բարձրացնելու նպատակով, որն ավելի կգրավի զբոսաշրջիկների ուշադրությունը:

6. Նախատեսվում է ստեղծել Տուրիստական Տեղեկատվական Կենտրոնի (ՏՏԿ):
7. Իրականացնել միջհամայնքային և ներհամայնքային (գյուղական) տուրիզմի զարգացումը խթանող միջոցառումներ՝ ԲԲ հյուրատների ստեղծում Ջերմուկ համայնքի գյուղերում
8. 2019 թվականին զբոսաշրջության ոլորտում Եղեգիս համայնքում ԵՄ-ի հետ համագործակցության ծրագիր:
9. Մասնակեց ամենամյա գաթայի փառատոնին և Գինու տոնին:

Վերոնշյալ աշխատանքները պատշաճ կատարելու և մարզում զբոսաշրջության ոլորտում առկա խնդիրների լուծման համար անհրաժեշտ է.

- Նախ և առաջ զարգացնել գերակա զբոսաշրջային կենտրոնները և զբոսաշրջային արդյունքները,
- սահմանել առաջարկվող ծառայությունների ցանկը,
- առաջնայնացնել թիրախային շուկաները, շարունակաբար ուսումնասիրել դրանց զարգացման միտումները,
- զարգացնել Վայոց ձորի, որպես կայուն, ապահով, ներդրումների և ձեռնարկատիրական գործունեության համար բարենպաստ և զբոսաշրջության համար գրավիչ մարզի, նկարագրի ձևավորումն ու համաշխարհային շուկայում արդյունավետ ներակայացումն ու խթանումը,
- բարելավել ուղևորափոխադրումային ցանցը և զբոսաշրջային ենթակառուցվածքները՝ նպատակային ներդրումների և իրավական դաշտի բարելավման միջոցով,
- ապահովել կեցության և այլ ենթակառուցվածքների որակական և քանակական աճը,
- խրախուսել շարունակական ներդրումները հետազոտությունների և մարդկային ռեսուրսների զարգացման ոլորտում՝ միևնույն ժամանակ հետևելով և վերահսկելով զբոսաշրջության զարգացման հետևանքները:

Նշված խնդիրներն արդյունավետ լուծելու համար անհրաժեշտ է հատկապես շեշտադրում **կատարել հետևյալ կոմպոնենտներին.**

- Համաշխարհային զբոսաշրջային շուկայում այսօր պահանջվում է ծառայությունների բարձր մակարդակ և այնպիսի ուղղություններ, որոնք

առաջարկում են ավելի շատ **արկածային զբոսաշրջություն**, քան պարզապես հանգիստ,

- Աճող նախապատվություն անկախ, հատուկ հարմարեցված և փոքր խմբային զբոսաշրջային փաթեթներին՝ ի հակադրություն զանգվածային զբոսաշրջությանը,
- Զբոսաշրջության ոլորտի տնտեսվարող սուբյեկտներ, որոնք ավելի շատ ուշադրություն են դարձնում հախորդի բավարարվածությանը, անվտանգությանը և ծառայությունների որակին,
- Զբոսաշրջության պահանջարկի աճ (համաժողովներ, կոնֆերանսներ, ցուցահանդեսներ) ,
- Մշակութային- ճանաչողական զբոսաշրջության աճ,
- Տարեց բնակչություն և առողջապահական խնդիրներ, որոնք հանգեցնում են առողջարանային, առողջապահական, բուժական զբոսաշրջության զարգացմանը,
- Երիտասարդները փնտրում են ավելի ակտիվ արձակուրդներ, մասնավորապես արկածային ճանապարհորդություններ,
- Էկոտուրիզմի և բնության հետ կապված զբոսաշրջության պահանջարկի կտրուկ աճ,
- Անցում զբոսաշրջության արտաքին կողմնորոշիչներից (դեմոգրաֆիա, կլիմա), դեպի ներքին կողմնորոշիչներ (ինքնազարգացման մեծ ձգտում, ստեղծագործականարտահայտություն)

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի

Զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժին